

ջերմոցներում այս բոյսը միայն իր արտասովոր մեծութեան համար է մշակւում։ Պետերուրք զի բուսաբանական պարտէզը նշյալէս այս ծաղիկներից մի հատն ունի։ Ամէն ամսու պարտէզի վարչութիւնը յայտարարում է ջրի շուշանի ծաղկելու ժամանակը, և հասարակութիւնը խուռան բազմութեամբ պարտիզի կլոր ջերմոցն է գիմում, որտեղ լնդաբակ ջրամբարի տաք ջրի երեսն հըսկայ ծաղկին է վիթխարի տերենները սփառել, ջրի շուշանի վարդագոյն սպիտակ ծաղիկները լայնութեամբ 14 մատնաշափ են լինում։ *

* *

Թէյն ինչպէս պէտք է խմել։ — Մենք ամէնքս թէյ, ենք խմում, սակայն շատ քչերս գիտենք, թէ ի՞նչպէս պէտք է խմել։ Զինացիները, որոնք թէյի թժիքը մշակելու մէջ առանձին հմտութիւն ու ձարտարութիւն են ցոյց տալիս, պատրաստում են նաև թէյի յայտնի տեսակները, որ մենք ստանում ենք Զինաստանից՝ այնպէս, ինչպէս այնտեղ պատրաստուած են։ ուրեմն շատ հասկանալի պիտի լինի, որ նրանք թէյ խմելն էլ մեղնից աւելի լաւ պիտի իմանան։ Զինացին երբէք առանձին թէյամանում թէյ չի պատրաստում, ինչպէս ընդունուած է շատ երկներում, այլ մի պտղունց չոր թէյ է լինում։ Թէյի բաժակի մէջ, եռ եկած ջուր քաշում վրան ու ծածկում կափարչով, եւ երբ թէյի բոլոր թերթիկները նստում են բաժակի տակը, զոյն տալով միջի ջրին, Զինացին խմում է, որքան կարելի է տաք տաք, ամեններն շմողնելով, որ հօվանայ։ Արևելքումն էլ թէյն առհասարակ այդպէս են խմում և համարում են այդ զովացնող միջոց։ Անըլին հանգամանքը շատ հասկանալի է, տաք թէյը, խիստ գործիքացում յառաջացնելով, ցածացնում է մեր մարմնի բարեխառնութեան աստիճանը, որով և հնարաւորութիւն է տալիս մեզ հեշտութեամբ տանելու տօմքը։ — Similia similibus curantur (ինչով տկարացար, նրանով և բժշկուիր)։ Բայց պէտք է ասել, որ Խուսաստանում թէյ պատրաստելու ձևն էլ բաւականին ուղիղ է, և արդիւր է միայն նախ թէյամանը տաք ջրով ողողել, յետոյ մէջը լցնել հարկաւոր շափով թէյ ու վրան ջոր քաշել և երբէք լնդանեռի վրայ շնչել, այլպէս թէյը վատ համ կստանայ ու իր բուրմունքի մի մասը կկորցնէ։

* *

Մառանների եւ զետեափոր նկուղների խոնառութեան առաջն տուներու միջոց։ — Պէտք է մի զրուանքայ քլորային կիր վերցնել ու լցնել մի հին խեցանօթի, և կամ ցնցուղի մէջ և բաց բերանով գնել մառանում։ Քլորային կիրը օդի ջրային գուրշիները իրեն կքաշի և նրա չորանալուն կնպաստէ, և յդ աղը, որ իր մէջն է հաւաքելու օդի գոլոր-

շիացած ջուրը և կամ գուցէ լուծուելու է նրա մէջը, կարող է զարձեալ պէտք զալ։ Հարկաւոր է միայն զօրեղ կրակի ազդեցութեան ենթարկել ու իր բնական վիճակին վերածել, իրը կորցնելով իր միջի ջուրը, կրկին ընդունակ է զառնում օդի ջրային գուրշիները իրեն ձգելու։ Այս միջոցն յատկապէս ձեռնտու է գործազրել այն տեղիրում։ որտեղ կարտովիլ են պահում։ որտեղ կարտովիլ են պահում։ որովհետեւ այս ձեռով հնարաւորութիւն են ունենում այզպիսի պաշարեղէնի ծլելու առաջն առնել։

* *

Մազերի բափուելու պատմաը։ — Պարիզի նշանաւոր բժիշկներից մէկը, Սարուրոն, որը յատկապէս մազերի հիւանդութեանց բժշկութեամբ է զբաղւում, գտել է հերաթափութեան բացիլը։ Նա ապացուցել է, որ ճաղատութիւնը յառաջ է գալիս սառնաձին միկրոբներից, որոնք իրենց արտաքին տեսքովը նման են լատիսական ծ տարին։ Մի քանի անյաջող փորձերից յետոյ, Սարուրոն կարողացաւ այս միկրոբներին բազմացնել, որոնցով և սկսեց մի կարգ հետաքրքիր փորձեր կատարել զանազան կենդանիների վրայ։ Այս ախտով ամենից աւելի հեշտութեամբ վարակւում են կատուներն ու ճագարները, որոնց կաշին աւելի զգայուն լինելով, շուտով զրկւում է մազերից, Միկրորի վնասակար ներգործութիւնը նրա մէջն է որ նա քայլքայում է այն զեղչելը, որոնք մազերի արմատներին անունդ են հասցնում։ Սարուրոն իր զեկուցման մէջ, որն այս օրերս կարդաց վկաչուի հիւանդութեանց մասնագէտների ժողովում։ յոյս է տածում, որ շուտով կարելի կլինի մազերի թափուելու առաջն առնել, նա հարեանցի կերպով յայտնեց, որ արդէն ձեռքի տակ այդ բացիկներին ոչնչացնելու միջոցն ունի և թէ կարելի է գործազրել այն, առանց որ և է վնաս պատճառելու մազերին։

ՄԱՅՍԵՎԱԼԵԽՈՍՈՒՈՒԹԻՒՆ.

↔ ↔ ↔

Սերէոսի պատմութիւնը և Մարքինացի, մատենադրական ուսումնասիրութիւն։ Ստ. Մալիսանեանց, Թիֆլիս, 1899։ Հրատարակութիւն Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան թ. 156։ Գիրքը կազմուած է է+118 էջից։

Գրքիս հեղինակը մեր զբականութեան մէջ յայտնի է զարձել իւր «Բռնի միութիւն և համարականի հայոց»։ և Ասողիկ պատմազրի ընտիր հրատարակութեանց վերայ կատարած աշխատութեամբ։

Գրական քննադատական ասպարիզում՝ նշանաւոր է նորա Փ. Բիւզանդի լուրջ ուսումնասիրութիւնը, իսկ Խօրենացուն այս առաջին անգամ չէ, որ նա հրապարակ է զուրս գալիս պաշտպանելու այս անգամ Սեբէոսի պատմութեան ուսումնասիրութիւնը հիմք առնելով:

Սեբէոսի պատմութիւնից պ. Մալխասեանցը քննադատութեան է ենթարկում նորա պատմէս կոչուած Ա. և Բ. զպրութիւնը: Համառօտակի յիշատակելով այս երկու զպրութեանց բովանդակութիւնը (էջ 1—4), կանգ է առնում այն ինչպիս վերայ թէ՝ ով է այս զպրութեանց հեղինակը (էջ 5—20), որովհետեւ չնայելով որ Սեբէոսի Ա. հրատարակիչ Թ. Միհրգատեանցը, ինչպէս և այնուհետեւ հայ և օտար բանասէրներն այս երկու զպրութիւնը բնականաբար Սեբէոսին են համարել, բայց 1862-ին Ք. Պատկանեանը առաջին անգամ իւր Սեբէոսի ուսուերէն թարգմանութեան յառաջաբանում ինչպէս և այլ առիթներով յայտնեց այն միտքը թէ՝ Սեբէոսինը չեն, այլ պատմահարար ընկած են Սեբէոսի պատմութեան սկզբում: Այս կարծիքին էին մինչեւ վերջերս բոլոր հայ և օտար բանասէրները՝ Գուտշմբէ, Գետակը, Տառ և Խալբաթեանց: Յառաջ թերելով պ. Մալխասեանցի հերքումները մենք մինոյն ժամանակ կտեսնենք, թէ ինչ առարկութիւններ են անում այդ բանասէրները:

1. Եթէ Ա. զպրութիւնը Սեբէոսի գործ չհամարենք այն պատճառով, որ ոչ մի կապ չունի «Պատմութիւն ի Ներակի» Ընդհանուր վերնագրի հետ, հետեւարար պէտք է նորա Գ. մասի եթէ ոչ Գ., գէթ Ա. և Բ. և Լ. և Լ. զլուխները, ուր շատ անգամ այնպիսի բաններ են պատմում: որ ոչ մի կապ չունեն Ներակի հետ—նոյնպէս Սեբէոսինը չհամարենք:

2. Բուռն պատմութեան այսինքն Գ. մասի սկիզբը զրուած նախերգանքում Սեբէոսը չէ ասում թէ՝ «ինքը չպիտի իսուի վաղինի ժամանակների մասին, որովհետեւ այս բոլորը նկարագրուած և պատմուած է ուրիշների ձեռքով»: այլ նորա խօսքը Վարդանաց շրջանի մասին է, ևրդ զժամանակի բագաւուրիան շարագրտին Յաղիւրի, և կամ ո՞րպէս քաջ նախարարացն Հայոց և ... նահապեան Մամիկոնէից տանն Կարմիրն ... Վարդան ... զինեցաւ ի պատերազմ... այն ամենայն ի ձեռն այլոց զրեցաւ, որպէս ցուցանի նոյն իսկ պատմութիւնն (Բ. տպ. Սեբ. Էջ 22—23.): Աւեմն հետեւեցում է պ. Մալխասեանը ճշտութեամբ որ խօսքը Վարդանաց ժամանակի մասին է, որ զանց է անում Սեբէոսը, «քանի որ Եղիշեն (նոյն իսկ պատմութիւնն) արդէն զրել է, Բոլորովին համաձայն լինելով պ. Մալխասեանի այս հայեացքին, պէտք է ասնեք որ նոյն իսկ պատմութիւնն իսպառի է առաջին Եղիշենին շի վերաբերիլ այստեղ, այլ առհասարակ պատմութիւնը կիշանակէ, ուզում

Ենք ասել որ Սեբէոսն ակնարկում է և Պաղար Փարպեցուն, ինչպէս ցոյց է տալիս «ի ձեռն այլոց զրեցաւ» եթէ միայն այլոյ չհամարենք:

3. Բ. զպրութեան վերնագրում յիշուած Սահմանասու Տարօնեցին Ասողիկը չէ: Ա. և Բ. զպրութեան և Ասողիկի մէջ եղած նման կտորները վերջինս է փոխ առել Սեբէոսից, ինչպէս և այլ տեղերուամ: իսկ Բ. զպրութեան վերջին Զ էջը չէ կարող քաղուած լինել ոչ Ասողիկից և ոչ Խորենացուց և ոչ էլ երկուսից միասին:

4. Ծատ տարօրինակ բան կինէր, որ այս երկու միմեանցից անկախ զպրութիւնները պատմաբար կցուէին Սեբէոսի պատմութեան սկզբին: Նախ Ա.-ը, և ապա մի ժամի հայրից տարի անցնելուց յետոյ կցուէր Բ.-ը, այն էլ Ա. զպրութեան և Սեբէոսի պատմութեան մէջ, և այնուհետև ամրող գրուածքը բաժանուած է առաջապես կլուխների:

5. Գուտշմբիցի նկատած ակնյայտնի նմանութիւնը և զիտաւորնել շեղումի կերպարանք ունեցող տարբերութիւնները Ա. զպրութեան և Խորենացու պատմութեան մէջ, կարող էին յառաջ զալ երկու հեղինակների նոյն աղբիւրից լսութիւնց ձաշակի և հայեացքի օգտուելու եղանակից: ինչպէս ենթագրում է և Կ. Մառը:

6. Պ. Խալաթեանցի կարծիքներին զալով ասում պ. Մալխասեանցը. ա) պ. Խալաթեանցն ինքը ցոյց է տուել Ա. զպրութեան և Սեբէոսի պատմութեան լեզուի: ոճի և գարձուածքների պաշեցնող նմանութիւն ու նոյնուրիւն: իսկ թէ Ա. զպրութիւնը զանազան աղբիւրներից է քաղուած, միթէ նոյնը չէր կարող անել և Սեբէոսը. բ) Սեբէոսը զրում է ժամանակակից զէպքեր, որ անտարակոյս ստոյգ և պատմական կլինին: իսկ հեռաւոր ժամանակների համար զիմելով զրաւոր կամ անզիր աղբիւրների զրուածքը բնականաբար այդ աղբիւրի գոյնը կսատանայ: գ) Յ. Օձնեցու և այս զպրութեան մէջ տեսնուած մի երկու բառերն կարևորութիւն չունին: քանի որ կարող էր Օձնեցին Սեբէոսից առած լինել:

Ինչ վերաբերում է Սեբէոսի Բ. զպրութեանը, որ աւելի քիչ է ըննութեան ենթարկուել, տիրող կարծիքը եղել է Պատկանեանինը, որ ըստ վերնազրի Խորենացուց և Ստ. Տարօնեցուց այսինքն Ասողիկից, քաղուածք է համարել, թէ կտուած է. Բիւզանդացին ու Ա. Տէր Միքելեանը պնդեցին որ այդ Սեբէոսինն է, բայց ինքը պ. Մալխասեան ընդարձակ ու հիմնաւոր քննութեան է ենթարկում: և նորանոր փաստերով նոյն ապացուցանում: Բ. զպրութիւնը կ մասերի է բաժանում և քննում է աղբիւրները, որ են «Մովսէս Խորենացի և Սահմանու Տարօնացի: հաւաստի և Ճշմրիտ մատենագիրք», Եթէ Ս. Տարօնեցին Ասողիկն է, ուրեմն Բ. զպրութիւնը պէտք է քաղուած լինի կամ Խո-

րենացուց կամ Ասողիկից, կամ երկուսից միասին: Այս տեսակէտով քննում է Բ. դպրութեան Ա. մասը, այն է Պարթևների ժամանակագրութիւնը, առաջ բերելով Բ. դպրութեան և Ասողիկի հատուածները գէմ՝ առ գէմ՝ (էջ 23—27), որից իսկոյն երկում է երկուսի ակնյայնի նմանութիւնը, եթէ չասենք նոյնութիւնը, միայն Ասողիկն ունի մի քանի կտորներ: որ Բ. դպրութեան մէջ չկան, Մանրազնին քննութիւնից պ. Մալխասեանը դալիս է այն եղբակացութեան, որ արտագրողն այս գէպրում Ասողիկն է ըստ իւր սոլորութեան և ոչ Բ. դպրութեան հեղինակը, Ապա (ըջ 36—39) նայն հատուածը համեմատելով Մ. Խորենացու հիւտ, ցոյց է տալիս որ գլխաւոր ազրիւր Խորենացին է, Այնուհետև որպէս զի ակներև ցոյց տայ Բ. դպրութեան պարթեների ցանկը մի անգամ Ա. դպրութեան մէջ գրելուց յիշոյ նորից յիշելլ՝ մէջ է բերում (էջ 42) Ա. Բ. դպրութեան և Խորենացու այդ ցանկը, որից երկում են այն աշքի ընկնող խոշոր ժամանակագրական տարրերութիւնները, որ կան Ա.-ի և Խորենացւ մէջ՝ ուստի Ա. դպրութեան հեղինակն այս նկատելով՝ հարկաւոր է համարել և Խորենացուն յիշելլ՝ կամ ինչպէս ինքն է ասում: Շերտուրդի ի պատմագրէն Մովսիսի Խորենացւոյ հաւասի և ձմերիս մատենագրէն, որին և աւելի հաւատացել է, ինչպէս երկում է ընդգծուած վերջին երկու բառերից:

Ապա պ. Մալխասեանն առ անձին նշանակութիւն չտալով այստեղ Բ. դպրութեան երկորդ մասին, այն է Մամիկոնեանց ծագման պատմութեան, անցնում է նոր դպրութեան Գ. և Դ. մասերին, այսինքն եռանուն և երկանուն կանոններին և համեմատութեան համար միմեանց հանդէպ զնելով Բ. դպրութեան, Ասողիկի և Խորենացու Ասասնեան, Բիւզանդացւոց և Արշակունի թագաւորների ցանկը (էջ 45—48) գալիս է այն եղբակացութեան, որ Բ. դպրութեան այս ցանկի ազրիւրը ոչ Խորենացին է և ոչ էլ Ասողիկը: սոքա չեն կարող լինել մանաւանդ այն պատճառով, որ Բ. դպրութեան նման թագաւորների ժամանակակցութիւն (սինմորոնիզմ) ոչ ունին: և ոչ էլ կարելի է այս երկուսի պատմագրութիւններից այդպիսի բան հանել և կազմել:

Ապա ինդիր է թէ՝ ով է այդ Բ. դպրութեան վերնագրում յիշուած Ստեփանոս Տարօնացին (էջ 53—59), Արարատ ամսագրի Ա. (1868) տարուայ մի յիշատակարանից շատ պարզ երկում է որ մենք ունեցել ենք այդ անունով մի հեղինակ, որ Մեսրոպի աշակերտ է եղել և զրել է պատմութիւն հանդերձ ժամանակագրութեամբ, որից և քաղել է Բ. դպրութեան հեղինակը իւր Գ. և Դ. մասը:

Այնուհետև մնում է սրոշել թէ ով է Ա.

դպրութեան հեղինակը կամ ինչպէս բանասիրութեան մէջ ընդունուած է կոչել Անձանօթը (Անձնութը): Պ. Մալխասեանը քննելով Սերէսոսի Ա. և Բ. հրատարակութիւնները, ցոյց է տալիս թէ ինչպէս վերջինս հարազատ տպագրութիւն չէ բուն ձեռագրի, այլ կամայական փոփոխութեանց հենթարկուած երկորդ հրատարակիչ Պ. Պատկանեանի կողմից, մինչդեռ առաջինի, ՈՒՀ հրդատեանցի, հրատարակութիւնից պարզ երկում է, որ Սերէսոսի բուփանդակ գործը, ուրեմն Ա. և Բ. դպրութիւններն էլ երրորդ մասի հետ ձեռագրի ակրուած ունեցել են «Պատմութիւններն Սերէսոսի եպիսկոպոսի ի հերակլն», և սկզբից և եթ գլուխների են բաժանուելու բայց ոչ պարուելուց Ա. և Բ.), ինչպէս ունին երկու տպագրութիւններն էլ: Այսպէս լինելուց յետոյ, արգելն ըստ արտահին երկութիւն այսպէս կոչուած Ա. և Բ. դպրութիւններն էլ գտնուում են Սերէսոսի գործ: Ապա պ. Մալխասեանը քննում է այն ներքին կապը, որ կայ երկու դպրութեանց և երրորդ մասի մէջ, և ցոյց է տալիս որ երկու դպրութիւնները Սերէսոսի պատմութեան անհամեց մասերն են (էջ 67—76): Այնուհետև ցոյց է տալիս այն ներքին համերաշխութիւնը որ կայ երկու դպրութեանց և բուն գրուածքի մէջ, մանաւանդ ժամանակագրութեան կողմից (էջ 76—86), և յասած է բերում պ. Խալաթեանցի և իւր կողմից «Եկղուի և ոճի» նմանութեանց բազմաթիւ օրինակներ (էջ 87—94):

Այս բոլորից յետոյ պ. Մալխասեանն ամփոփելով իւր չօշափած կէտերը հանում է այս ընդհանուր եղբակացութիւնը, որ Ա. և Բ. դպրութեանց հեղինակն ինքը Սերէսոսն է, և որ նա օգտուել է ի միջի այլոց և Մովսէս Խորենացու պատմութիւնից, կոչելով նորան ձմերիս և հաւասի մատենագրի: Ապա Սերէսոսի պատմութեամբ ցոյց է տալիս (էջ 97—100) որ նա ըստ ամենայն հաւասիկանութեամբ իւր պատմութիւնն աւարտել է 661 ոչ առաջ և 668 ոչ յետոյ:

«Եւրեմն Սերէսոսը եղբակացնում է պ. Մալխասեանը, Սերէսոստրոսի և Սոկրատի հայերէն թարգմանութիւններից գոնէ 10—15 տարի առաջ, օցունի է Մովսէս Խորենացու պատմութիւններից: Այն ինչ մեզնում վերջիր պնդում էին որ Խորենացու պատմութիւնը 676-ից առաջ չէր կարող գոյութիւն ունեցած լինել:

Գրիփի Բ. յաւելլուածն (էջ 115—118) արտառը լուսութիւն է Ստեփանոս Տարօնեցու հատուածի Արարատ ամսագրից, իսկ Ա. յաւելլուածում (101—114) համենում է Սերէսոսի Բ. դպրութեան մէջ պակասը և ընդմիջարկութիւնները ցոյց տալ, Բ. տպագրութեան էջ 30—36 խառնակուած ու շփոթ հատուածները ետ ու առաջ դասաւորելով պատմու-

թեան ընթացքին մի կապ դանել և ուզգել շատ բառերի և թուերի աղաւաղումներ։ *

Կարելի էր գուցէ մանրամասնութեանց մէջ պ. Մալխասեանի զիտողութեանց շհաւանել և այլ մէկնութիւններ տալ, բայց քննութեան այդ տեսակ բազմակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրութեան նկամամբ նշանակութիւն չունի այդ, և նորա փաստերը և եզրակացութիւնները հիմնաւոր են։


Ա. Ե.



* Օգոստով այս առրից մեր կողմից աշխատելի ուղղել Հ տղաւաղուած յատուկ անուններ, որ ոչ մի ուրիշ տեղ չեմ տեսել։

Էջ 22. Եւ եղիւ ի նուազել . . . Արշակունիաց ի Հայաստան աշխարհի, ի բանեալ տերութեանն Վասիշապուհ արցայի՛ տիրէ ի վերայ սուրա ազգն Կարցի կ դմայ եցի ի իշխանութեանն Պարզ է որ այսիդ խօսքը Սասանեաց մասին է. ուստի մենի այս բառն այսպէս ենի վերլուծում Պարս + հեղովայիցի։ Եղովմայիցի բառը պէտք է լինի ելամա(յի)ցի։ Մեր մեր պատմագիւները ելամ. ելամա(յի)ցի անուղու իմանում են Պարս (ազգն ու երկրը) տես Աստիկ (Ա. Հանդես. Դ. հ. 25), այլ եւ Երևան վարդապետ Բառդիր Հայոց է 489. «Եղովմայիցի և պարսիկ անամսան է»։ Ուստի Կարգ=Պարս. զիմաստո Պ և Կ տաների շիրութիւն։ Կարձաւ ենի որ այս բառը լուսացնում իրեւ բացատրութիւն ելամայիցի բառին դրուած լինելով վերը մի բառ է համարուիլ. այնունեւ գրացիր արտադրողին աւելի ծանօթ լինելով ո. Գրի եղ ովայ յեցի անունը, շփորիկ է։

Էջ 28. Շինեալ յաղաք . . . զոր անուանեալ շահաստան(յն) Ակառյ կոչեն։ ընդգծուած բառը պէտք է լինի Հ + Առավայ։ Հ զիմաստոի բաց լինելով կարելի է միայն այս բառուն անուանեալ բառը բացատրելու ժամանակ բողոքում են որ յետոյ զունաւոր կամ ծաղկազարդ տառ գրեն, որ յետոյ զանազան պատմաներ կատարուեն՝ ապագայ տէք գրագիւներն այնպէս էլ արտացրում են. այնունեւ երկարացիր Ռավմայ դիւրութեամբ կդառնար մինոյ, մանաւանդ տէքս, վերիվերոյ և կամ արագ արտացրողի մեռնում։



ՅՈՒՆԻՍ ԱՐԵՎԱԿ 1899 թ. ՅՈՒՆԻՍ.

ՊԱՏՄԱԿԱՆ—ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՍՏԽՈՒԹԻՒՆՆԵՐ.

I.

ԽՈՍՔՈՎԻԿ ԹԱՅՐԴՄԱԿԱՀ

(Հ. Դար)

(Եարունակութիւն) *

Ամբողջ Դ. պրակը աւելորդ աշխատութիւն կինէր մեզ համար, եթէ առանց այս ու այն կողմն ընկնելու հնարաւորութիւն ունենայինք որոշելու հեղինակի անձը։ Մենք ստիպուած էինք նի; թեր հաւաքել յետագայքնութիւնների համար նոյնը չենք կարող ասել Դ. պրակի համար. քննագատը անհրաժեշտարար պարտաւոր է զգում պարզել զրբի միութեան խնդիրը։ Խոսրովի անունով մեզ հասած զրբը բաղկացած է հինգ միմեանցից անկախ մասերից. առաջին մասի վերնազրի մէջ հեղինակը յիշուած է Խոսրովիկ թարգմանիչ անունով. Դ. և Ե. զլուխներում հեղինակն իրեն Խոսրով է անուանում վերջին անունը կրկնուած է և Ե. զլուխ վերնազրի մէջ, ** իսկ Բ. և Գ. զլուխներում հեղինակի մասին ոչ մի յիշատակութիւն չկայ։ Խոսրովիկ թարգմանիչը նոյն է. Դ. և Ե. զլուխների հեղինակ Խոսրովի հետ, և եթէ նոյնն է, նորա գործերն են արգեօք Բ. և Գ. զլուխները։ Ահա հարցեր, որոնց պարտաւոր ենք պատասխանել այս պրակի մէջ։ Հասկանալի է, որ ի զուր կինւխն մեր ջանքերը ամերողջ զրոծի հեղինակն ու ժամանակը որոշելու, եթէ նախապէս չհաստատենք, թէ հինգ զլուխն էլ մի հեղինակի զրոծ է. թերի կի-

* Տես Արտաք 1899 թ. յունիս եր. 260:

** Արտաք 1899 թ. յունիս.